«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը առարկայի դասավանդման ընթացքում

Հարցը՝ Ինչ ազդեցություն է ունենում արժեքային համակարգի ձևավորումը սովորողների դաստիարակության և ուսուցման գործընթացում

Կատարող՝ Գայանե Աղաբեկյան

Ուսումնական հաստատություն՝

Արա Հարությունյանի անվան թիվ 49 հիմնական դպրոց

Բովանդակություն

Ներածություն 3
ԳԼՈՒԽ 1. Անձնավորության արժեքային համակարգը և նրա ազդեցությունը սոցիալական վարքի վրա 5
ԳԼՈՒԽ2. Արժեքային կողմնորոշումների ձևավորման կարևորությունը տարբեր տարիքային փուլերում 9
ԳԼՈՒԽ 3. Մանկավարժի մեթոդաբանական մշակույթը առարկայի դասավանդման ընթացքում.....11
Եզրակացություն..... 14
Գրականություն 16

Ներածություն

Անձի արժեքային կողմնորոշումների համակարգը հանդես է գալիս որպես զարգացման կարգավորիչ մեխանիզմ, որը որոշում է մտադրված նպատակների իրականացման ձևը և դրանց դրդող ուժերի սպառման և այդ նպատակներին հասնելու դեպքում՝ խթանում նոր զգալի նպատակաների կազմակերպումը: Իր հերթին, անձի զարգացման ձեռք բերած մակարդակը աստիճանաբար ստեղծում է նոր նախադրյալներ նրա արժեքային կողմնորոշումների համակարգի զարգացման ու կատարելագործման համար:

Արժեքային երևույթների ամենակիրառական տերմինը ‘արժեքային կողմնորոշումն է’: Այն մատնանշում է այն արժեքները, որոնցով կողմնորոշվում է անձնավորությունը: Յուրաքանչյուր մարդու արժեքների համակարգը անհատական է: Մի անձնավորության համար կարող է նշանակալի լինել մի բան, որը բացարձակապես արժեք չունենա կամ ոչ կարևոր լինի մյուսի համար: Բազմաթիվ հետազոտությունները ցույց են տվել, որ երեխայի նորմալ զարգացման համար կարևորագույն նախադրյալներից են հանդիսանում բարենպաստ ընտանիքը, հատկապես հուզական կապը մոր հետ, որի հետևանքով երեխայի մոտ ձևավորվում է հասարակությանը և բարոյականությանը համարժեք կայուն արժեքային համակարգ:

Քանի որ մարդու արժեքային համակարգը կարող է ծառայել նրա պահանջմունքների բավարարման, նրա հիմնական նպատակների իրագործման միջոց, անհրաժեշտ է երեխայի մոտ ձևավորել այնպիսի արժեքներ, որոնք չեն հակասում հասարակության մեջ ընդունված նորմերին և բավարարում են նրա պահանջմունքները:

Արժեքային համակարգի ձևավորմանը նպաստում են ընտանեկան հարաբերությունները, ծնողների վարած կյանքը, կենցաղային պայմանները և ընդհանրապես շրջապատը:

Առողջ հասարակություն ձևավորելու համար անհրաժեշտություն է առաջանում մեծ ուշադրություն դարձնել երեխաների դաստիարակությանը, արժեքային կողմնորոշումների ձևավորմանը: Երեխաների, դեռահասների

արժեքային համակարգի ձևավորման դժվարությունը նրանում է, որ այն հաստատություններում, որտեղ դաստիարակվում են երեխաները, բավարար չափով ուշադրություն չի դարձվում նրանց բարոյական դաստիարակությանը, արժեքային կողմնորոշումների ձևավորմանը:

Երեխաների, դեռահասների արժեքային համակարգի ճիշտ ձևավորման համար նպատակահարմար է նման հաստատություններում ընդգրկել համապատասխան մասնագետներ, որոնք նման երեխաներին կօգնեն ձեռք բերել այնպիսի արժեքներ, որոնց օգնությամբ ծնողական խնամքից զուրկ երեխաները իրենց կզգան հասարակության լիաժեք անդամ:

ԳԼՈՒԽ 1. Անձնավորության արժեքային համակարգը և նրա ազդեցությունը սոցիալական վարքի վրա

Անձի արժեքային կողմնորոշումների համակարգը հանդես է գալիս որպես զարգացման կարգավորիչ մեխանիզմ, որը որոշում է մտադրված նպատակների իրականացման ձևը և դրանց դրդող ուժերի սպառման և այդ նպատակներին հասնելու դեպքում՝ խթանում նոր զգալի նպատակաների կազմակերպումը:

Բազմաթիվ հետազոտությունները ցույց են տվել, որ երեխայի նորմալ զարգացման համար կարևորագույն նախադրյալներից են հանդիսանում բարենպաստ ընտանիքը, հատկապես հուզական կապը մոր հետ, որի հետևանքով երեխայի մոտ ձևավորվում է հասարակությանը և բարոյականությանը համարժեք կայուն արժեքային համակարգ:

Քանի որ մարդու արժեքային համակարգը կարող է ծառայել նրա պահանջմունքների բավարարման, նրա հիմնական նպատակների իրագործման միջոց, անհրաժեշտ է երեխայի մոտ ձևավորել այնպիսի արժեքներ, որոնք չեն հակասում հասարակության մեջ ընդունված նորմերին և բավարարում են նրա պահանջմունքները:

Յուրաքանչյուր մարդու արժեքների համակարգը անհատական է: Մի անձնավորության համար կարող է նշանակալի լինել մի բան, որը բացարձակապես արժեք չունենա կամ ոչ կարևոր լինի մյուսի համար:

Արժեքային համակարգի ձևավորմանը նպաստում են ընտանեկան հարաբերությունները, ծնողների վարած կյանքը, կենցաղային պայմանները և ընդհանրապես շրջապատը:

Վերջին տարիներին հոգեբանության , մակավարժության, մարդաբանության և այլ գիտությունների մեջ տարածում է ստացել արժեքահարմարվողական մոտեցումը, որի հիման վրա զարգանում են նոր ուղղություններ, Իդեոկոռեկցիան, Միտումնային հոգեթերապիան՝ որոնց նպատակը անձի արժեքային կողմնորոշումների, դիրքորոշումների և հարաբերությունների ոլորտի կարգա¬վո-րումն է: Ըստ Յու. Կուզնեցովի Միտումնային հոգեթերապիան ըստ էության ինտերվենտիվ՝ միջամտություն չէ, այլ համաչափ ստեղ¬ծա¬գործական փոխ-ներգործություն է,

որտեղ աշխատանքի հիմ¬նա¬կան արդյուն¬քը ձեռք է բերվում այդ փոխներգոր¬ծու¬թյունից շատ ավելի ուշ : Այս մոտեցումների տեսա¬գաղա¬փա¬րական հենքը սկիզբ է առնում փիլիսոփայական արժեքաբանության, աքսիո¬թերապիայի, հարաբե¬ություն¬ների տեսության (Մյա¬սիշչև Վ.), Կ. Ռոջերսի, Ա. Մասլոուի, Վ. Ֆրանկլի մոտեցումներից:

Հոգեբանական հարմարումը արժեքների սուբյեկտիվ և օբյեկտիվ համակարգերի համապատասխանեցնելու գործընթացն է:

Կարելի է առանձնացնել արժեքային հարմարման հետևյալ ձևերը.

1) ակտիվ-կառուցողական, երբ սուբյեկտը հարմարվում է արտաքին միջավայրի վերափոխմամբ, (օրինակ՝ ցանկացած առօրյա արդյունավետ գործունեություն),

2) ակտիվ-ապակառուցողական, երբ սուբյեկտը քանդում, կործանում է արտաքին միջավայրը, (օրինակ՝ հանցագործություն, իրավախախտում, ագրեսիա),

3) պասիվ-կառուցողական, երբ սուբյեկտը հարմարվում է ներքին կառույցների գի¬տակցված վերափոխման միջոցով (օրինակ՝ ուսում, սպորտ),

պասիվ-ապակառուցողական. այս դեպքում սուբյեկտը վերափոխում է սեփական միջավայրը ինքնակործանման միջոցով, (օրինակ՝ ալկոհոլամոլություն, թմրամոլություն, ինքնակործանիչ վարք և այլն):

Քանի որ մարդու արժեքային համակարգը կարող է ծառայել նրա պահանջմունքների բավարարման, նրա հիմնական նպատակների իրագործման միջոց, անհրաժեշտ է երեխայի մոտ ձևավորել այնպիսի արժեքներ, որոնք չեն հակասում հասարակության մեջ ընդունված նորմերին և բավարարում են նրա պահանջմունքները:

Անձը, որն իրենից ներկայացնում է դինամիկ համակարգ, գտնվում է անընդհատ փոփոխման և զարգացման վիճակում: Անձի ձևավորման այդպիսի պրոցեսում աստիճանաբար ավելի մեծ նշանակություն են ձեռք բերում նրա ներքին շարժող ուժերը, որոնք թույլ են տալիս մարդուն ինքնուրույն որոշել սեփական զարգացման խնդիրները և ուղղությունները: Ջ. Լովինգերի էգո - զարգացման’ էկլետիկական տեսության մեջ, որն իր մեջ ներառում է Լ. Կոլբերգի հայացքների համակարգը և Է. Էրիկսոնի սոցիալ-հոգեբանական տեսությունը, անձի զարգացումը հասկացվում է որպես միասնական, բազմակողմանի գործընթաց, որի էական

կողմերն են հանդիսանում ինքնաղեկավարման աղբյուրը, փոխհարաբերությունների ձևը, գիտակցության իմաստային բովանդակությունը և մտածելակերպը: Նրա տեսության կենտրոնական տարրն է համարվում էգոն, որը տվյալ դեպքում հանդես է գալիս որպես մի հասկացություն, որն իր իմաստով մոտ է 'ես-կոնցեպցիային': Ջ. Լովինգերն առանձնացնում է անձի զարգացման յոթ հիմնական փուլեր:

Նախասոցիալական փուլում մանուկների վարքը կառավարվում է բացառապես սեփական պահանջմունքներով, ցանկության ձգտումներով, իմպուլսներով, այսինքն՝ խրախուսանք ստանալու և պատժից խուսափելու ցանկությամբ:

Ինքնապաշտպանական փուլը բնութագրվում է էգոցենտրիկությամբ (եսակենտրոնությամբ) և մանիպուլյացիայի համդեպ հակմամբ: Երեխայի ենթարկվելը որպես կանոն պայանավորված է շահ ունենալու ձգտմամբ:

Կոնֆորմային փուլը որոշվում է արտաքին կանոնների և արժեքների յուրացմամբ, իսկ վարքը կառավարվում է դրանց խախտման դեպքում առաջացած ամոթի զգացումով:

Գիտակցական փուլում շրջապատի նորմերի հիման վրա արդեն ձևավորվում են սեփական սկզբունքներն ու իդեալները, սահմանափակվում են նպատակներն ու միջոցները, առաջանում է ինքնաքննադատության հակում, ինչ-որ բան անելու դեպքում առաջացած հետևանքների համար պատասխանատվություն:

Ավտոնոմ փուլը բնութագրվում է սեփական և հասարակական արժեքների համակարգերի միջև կոնֆլիկտի գիտակցմամբ, որին զուգահեռ ձևավորվում է համբերատարություն և հարգանք այլ տեսակետների նկատմամբ՝ դրանց հասկանալու ունակության հիման վրա:

Վերջին՝ ինտեգրացիոն փուլը, որին հասնում են 1%-ից ավելի քիչ մեծահասակներ, պայմանավորված է կոնֆլիկտային արժեքների կիրառման ունակությամբ՝ ինչպես իր ներսում, այնպես էլ ուրիշների հետ ունեցած հարաբերություններում:

Առողջ հասարակություն ձևավորելու համար անհրաժեշտություն է առաջանում մեծ ուշադրություն դարձնել երեխաների դաստիարակությանը, արժեքային կողմնորոշումների ձևավորմանը: Երեխաների, դեռահասների

արժեքային համակարգի ձևավորման դժվարությունը նրանում է, որ այն հաստատություններում, որտեղ դաստիարակվում են երեխաները, բավարար չափով ուշադրություն չի դարձվում նրանց բարոյական դաստիարակությանը, արժեքային կողմնորոշումների ձևավորմանը:

Արժեքային համակարգի ձևավորմանը նպաստում են ընտանեկան հարաբերությունները, ծնողների վարած կյանքը, կենցաղային պայմանները և ընդհանրապես շրջապատը:

ԳԼՈՒԽ2. Արժեքային կողմնորոշումների ձևավորման կարևորությունը տարբեր տարիքային փուլերում

Վերջին 20-30 տարում դեռահասներն ավելի արագ են զարգանում, նրանք ավելի խոշոր են, բարձրահասակ, ուժեղ, քան նրանց հասակակիցները 30 տարի առաջ: Եթե մի քանի տասնամյակ առաջ դեռահաս էր համարվում 12-13-ից մինչև 16 տարեկան հասակը, ապա այժմ ավելի ճիշտ կլինի ասել, որ տարիքային ստորին սահմանը մոտավորապես 11 տարեկանն է, իսկ վերջին սահմանը՝ 14-15 տարեկան հասակը: Դեռահաս տարիքը գնահատելիս արտասահմանյան շատ հոգեբաններ որպես հիմք ընդունում են այդ տարիքում ինքնահաստատման ենթագիտակցական ձգտման դրսևորումը՝ որպես ի սկզբանե մարդուն հատուկ յուրատեսակ նախնական անհաղթահարելի հակումը, որն իբր անխուսափելիորեն առաջ է բերում եսասիրություն, ուրիշ մարդկանց նկատմամբ արհամարհական զգացմունք, հանգեցնում շրջապատի հետ բախման, ինչպես նաև հաճախ մեկուսանալու ձգտման:

Այս շրջանում ընթանում է նաև բարոյական զարգացումը, ձևավորվում են դեռահասի համոզմունքները: Հատկապես դեռահասության տարիքում ինքնաճանաչման հետ մեկտեղ մարդու մոտ առաջանում են հարցեր. Ինչի համար եմ ես ապրում, Որն է իմ կյանքի նպատակը: Այս եզրույթը նաև այսօր տեսնում ենք ներկայիս կիրառվող հանրակրթական չափորոշչի կարևորագույն հիմնախնդիրներում: Ուսուցումը կազմակերպել և արդյունքների վերլուծությունը պետք է իրականացվի անձի ինքնուրույն գործունեության շրջանակում: Որն էլ կնպաստի կյանքի կարևորագույն հարցերի պատասխանները ստանալ:

Նրանք ֆիզիկապես առողջ են, բայց հետ են մնում կրթվածությամբ իրենց հասակակիցներից, քանի որ նրանց հիշողությունը, մտածողությունը և երևակայությունը զարգացած չեն: Նրանք չեն սիրում աշխատել, չեն կարողանում սիստեմատիկ կերպով զբաղվել ինչ-որ գործով, անել այն, ինչը իրենց հետաքրքրում է: Ֆիզիկական և սեռական բռնության ենթարկված դեռահասները ունեն սուիցիդի ձգտումներ: Նրանք ագրեսիվ են, նեղացկոտ, հակված են գողության, թափառաշրջության, ալկոհոլիզմի և ձգտում են սեռական հարաբերությունների:

Ուսումնասիրելով ծնողական խնամքից զուրկ դեռահաս-ների խումբը, որը մասնակցել է հանցագործության, հանգել ենք նրան, որ նրանք դպրոցում կարգուկանոնի խախտողներ են եղել, նրանց մոտ հաճախ նկատվել է հակասոցիալական վարք: Դեռահասները հակված են կռիվների, մանր գողությունների, չեն ցանկանում աշխատել և սովորել: Դեռահասի հետ աշխատանքում պետք է խթանել ինքնաճանաչման պրոցեսը, խրախուսել անձնական օրագրի պահելը, սովորեցնել այդ: Պետք է զարգացնել երեխայի մոտ ինքնուրույնությունը, քննադատություններից անկախությունը և միավայրի գնահատումը: Մեծահասակների կողմից նրանց հանդեպ վերաբերմունքը պետք է լինի հարգալից:

Գրեթե բոլոր հեղինակների կարծիքով, սկսած Վիգոտսկուց, դեռահաս տարիքում գլխավոր հատկանիշ է համարվում մեծ լինելու զգացումը, որն արտահայտվում է չափահասների արժեքների դիրքորոշմամբ: Այդպիսի դիրքորոշումը, ինչպես նկատում է Ի. Ս. Կոնը, տարբերվում է հակասական բնավորությամբ: Մի կողմից դեռահասների համար բացարձակ նշանակություն են ձեռք բերում արժեքները, որոնք նրանք յուրացնում են իրենց հասակակիցների հետ շփվելու ընթացքում, մյուս կողմից այդ ժամանակաշրջանում առաջին անգամ հնարավորություն է ընձեռվում ձևակերպել սեփական կապակցված և ոչ հակասական արժեքային համակարգը, որը բնորոշվում է արտաքին, ‘չափահաս’ բարոյականության սկզբունքների կրիտիկական գերագնահատման ընդունակության զարգացմամբ:

ԳԼՈՒԽ 3. Մանկավարժի մեթոդաբանական մշակույթը առարկայի դասավանդման ընթացքում

Մանկավարժի մեթոդաբանական մշակույթ հասկացությունը մեկնաբանելու համար նախ պարզաբանենք մշակույթ հասկացության էությունը: Հասարակության, մարդու ստեղծագործական ուժերի, ընդունակությունների զարգացման որոշակի մակարդակ է մշակույթը,որն արտահայտում է մարդկանց կյանքի ու գործունեության կազմակերպման ձևերը: Նեղ իմաստով դա մարդկանց հոգևոր կյանքի ոլորտն է: Մշակույթն ներառում է մարդկանց գործունեության նյութական և հոգևոր արդյունքները: Ուսուցչի մեթոդաբանական մշակույթը նրա ընդհանուր մշակույթի մի բաղադրիչն է: Այսպիսով մեթոդաբանական մշակույթը կարելի է դիտարկել որպես ամբողջական, բազմամակարդակ, բազմաբաղադրիչ կրթության բաղադրատարր, որը ներառում է ուսուցչի մանկավարժական փիլիսոփայությունը / հայացքները, համոզմունքները, տհաճությունները/ և մտավոր գործունեությունը: Միաժամանակ ուսուցչի մեթոդաբանական մշակույթը նպաստում է ուսուցչի դրդապատճառներն, մտավոր, հոգևոր, բարոյական, գործոնային ոլորտների վրա՝ նպաստելով նաև նրա մասնագիտական կայացմանը:

Ուսուցչի մանկավարժական մեթոդաբանական մշակույթի ձևավորման չափանիշներն են՝

1. արժեքների գիտակցումը և վերաբերմունքը դրանց նկատմամբ,
2. արժեբանական կողմնորոշումները և դրանց իրացումը որպես գործունեության նպատակ
3. հետազոտություն կատարելու պահանջմունքը մանկավարժական գործունեության մեջ;
4. կենսական և պրակտիկ գործունեության կազմակերպման սկզբունքների, մեթոդների և միջոցներին/ տեխնոլոգիային/ տիրապետելը,
5. գործունեության եղանակների տիրապետումը և իրականացումը/ ստեղծագործական վերաբերմունք գործունեության վերաբերյալ և անդրադարձ կատարելով ունակությունը ռեֆլեկսիան/:

Անհրաժեշտ է տարբերակել ուսուցչի մեթոդաբանական մշակույթը և հետազոտող ուսուցչի մեթոդաբանական մշակույթի հասկացությունները: Պրակտիկ մանկավարժի մեթոդաբանական մշակույթի էությունը այնպիսի մեթոդաբանական որոնում կատարելու մեջ է, երբ դա անհրաժեշտ է աշակերտների զարգացման համար; Ապագա մանկավարժի մեթոդաբանական մշակույթի մոդելը ներառում է հոգեկան ոլորտի, մասնագիտական առումով, կարևոր բաղադրիչները:

Մտավոր ոլորտ: Այն ներառում է մանկավարժական մտածողությունը /մանկավարժական փաստերը, երևույթները, գործընթացները, համակարգերը վերլուծելու ընդունակությունը, մանկավարժական խորագիտությունը, ներըմբռման ուժը, երևակայությունը, կանխատեսելու ընդունակությունը, մասնագիտական դիտողականությունը, ստեղծագործությունը, երևակայությունը ինչպես նաև նոր գիտելիքներ յուրացնելու համամարդկային և բարոյական արժեքները գնահատելու ընդունակությունը, տեղեկատվություն հայթայթելու, տեղեկատվական միջավայրում կողմնորոշվելու, նոր տեխնոլոգիաներով հաղորդակցվելու կարողությունը:

Դրդապատճառային ոլորտ: Մասնագիտական գործունեության դրդապատճառը/ մասնագիտական գործունեության մեջ նորագույն տեխնոլոգիաների տիրապետման և ներդրման առաջավոր փորձը ուսումնասիրելու ցանկությունը, մանկավարժական վարպետությունը և իմիջը կատարել ստեղծագործելու ձգտումը: Դրա մեջ մտնում է մարդու շփման մակարդակը, գրավիչ երևալու կարողությունը, հագուստը, ժեշտերը և այլն; Նա միաժամանակ պետք է տեղյակ լինի հետազոտման առարկայի վերաբերյալ հոգեբանական, մանկավարժական հետազոտությունների և հայեցակարգերին: Առարկայական պրակտիկ ոլորտում անհրաժեշտ է, որ ձևավորված լինեն հետազոտողի հետևյալ հետազոտական կարողությունները: Նա պետք է կարողանա դպրոցական պրակտիկայում բացահայտել գիտական հիմնախնդիրներ, ձևակերպել դրանք, մշակել և ուսումնասիրել դպրոցականների ուսուցման, դաստիարակության զարգացման, մանկավարժական գործունեության հիմնախնդիրներին նվիրված ուսումնասիրությունները, ընտրել գիտական տեղեկատվության ստացման միջոցները, անցկացնել տեստավորում, անկետավորում, կազմել սանդղակներ, մշակել մանկավարժական գիտափորձի անցկացման մեթոդիկա, իրականացնել այդ

գիտափորձը, վերլուծել արդյունքները, ընդհանրացնել վիճակագրական և մաթեմատիկական մշակման, գրական լեզվով ձևակերպել հետազոտության արդյունքները հոդվածների, առանձին հրապարակումների, մենագրությունների տեսքով:

Էզինստեցիալ ոլորտ: Պետք է ձևավորվի հետազոտվողի 'Ես' հայեցակարգը: Երիտասարդ գիտնականը ոչ թե պետք է կուրորեն հետևի քարացած, հաճախ ոչ արդիական գիտական տեսություններին, այլև համարձակորեն դիմի ռիսկի, չվախենա սխալ կարծիքներ հայտնել, ձևակերպել իր հայացքներին ու գաղափարները, կարողանա գնահատել իր հնարավորությունները, գիտական ներուժը: Երիտասարդ հետազոտվողի ինքնակարգավորման ոլորտը պետք է ընդգրկի ինքնահայեցողության ընդունակությունները, որոնք կարող են օգնել նրան համարժեքորեն գնահատել իրեն որպես գիտնականի և որպես պրակտիկ աշխատողի: Նա պետք է օժտված լինի իր հետազոտության մարտավարությունը մշակելու կարողությամբ, գիտափորձով հիմնավորի այն և կարողանա սահմանել իր հետազոտության արդյունքները:

Հուզակամային ոլորտը բնութագրում է ստեղծագործական ոգեշնչմամբ, 'ինքնաարյումով', գիտական և ոչ գիտական խոչընդոտներ հաղթահարելու կարողությամբ:

Եզրակացություն

Այսպիսով ընդհանրացնելով վերը շարադրվածը հանգել ենք հետևյալ եզրակացություններին.

1. Բազմաթիվ հետազոտությունները ցույց են տվել, որ երեխայի նորմալ զարգացման համար կարևորագույն նախադրյալներից են հանդիսանում բարենպաստ ընտանիքը, հատկապես հուզական կապը մոր հետ, որի հետևանքով երեխայի մոտ ձևավորվում է հասարակությանը և բարոյականությանը համարժեք կայուն արժեքային համակարգ:
2. Քանի որ մարդու արժեքային համակարգը կարող է ծառայել նրա պահանջմունքների բավարարման, նրա հիմնական նպատակների իրագործման միջոց, անհրաժեշտ է երեխայի մոտ ձևավորել այնպիսի արժեքներ, որոնք չեն հակասում հասարակության մեջ ընդունված նորմերին և բավարարում են նրա պահանջմունքները:
3. Արժեքային համակարգի ձևավորմանը նպաստում են ընտանեկան հարաբերությունները, ծնողների վարած կյանքը, կենցաղային պայմանները և ընդհանրապես շրջապատը:
4. Գրականությունների ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ մայրական սիրուց և հոգատարությունից զրկված երխաները թերզարգացած են էմոցիոնալ: Ֆիզիկական և ինտելեկտուալ առումներով: Ուսումնասիրելով որոշ հետազոտություններ պարզվեց նաև, որ ծնվելու օրվանից լքված երեխաները հետագայում լինում են թերզարգացած, չեն ունենում զարգացած խոսք: Պատճառն այն է, որ նրանք զրկվում են ամենակարևորից՝ մայրական սիրուց:
5. Երեխաների, դեռահասների արժեքային համակարգի ճիշտ ձևավորման համար նպատակահարմար է նման հաստատություններում ընդգրկել համապատասխան մասնագետներ, որոնք նման երեխաներին կօգնեն ձեռք բերել այնպիսի արժեքներ, որոնց օգնությամբ ծնողական խնամքից զուրկ երեխաները իրենց կզգան հասարակության լիաժեք անդամ:
6. Բազմաթիվ հետազոտությունները ցույց են տվել, որ երեխայի նորմալ զարգացման համար կարևորագույն նախադրյալներից են հանդիսանում

բարենպաստ ընտանիքը, հատկապես հուզական կապը մոր հետ, որի հետևանքով երեխայի մոտ ձևավորվում է հասարակությանը և բարոյականությանը համարժեք կայուն արժեքային համակարգ:

7. Քանի որ մարդու արժեքային համակարգը կարող է ծառայել նրա պահանջմունքների բավարարման, նրա հիմնական նպատակների իրագործման միջոց, անհրաժեշտ է երեխայի մոտ ձևավորել այնպիսի արժեքներ, որոնք չեն հակասում հասարակության մեջ ընդունված նորմերին և բավարարում են նրա պահանջմունքները:

8. Արժեքային համակարգի ձևավորմանը նպաստում են ընտանեկան հարաբերությունները, ծնողների վարած կյանքը, կենցաղային պայմանները և ընդհանրապես շրջապատը:

9. Արժեքային համակարգի ձևավորմանը նպաստում են ընտանեկան հարաբերությունները, ծնողների վարած կյանքը, կենցաղային պայմանները և ընդհանրապես շրջապատը:

10. Անձը, որն իրենից ներկայացնում է դինամիկ համակարգ, գտնվում է անընդհատ փոփոխման և զարգացման վիճակում: Անձի ձևավորման այդպիսի պրոցեսում աստիճանաբար ավելի մեծ նշանակություն են ձեռք բերում նրա ներքին շարժող ուժերը, որոնք թույլ են տալիս մարդուն ինքնուրույն որոշել սեփական զարգացման խնդիրները և ուղղությունները:

11. Յուրաքանչյուր մարդու արժեքների համակարգը անհատական է: Մի անձնավորության համար կարող է նշանակալի լինել մի բան, որը բացարձակապես արժեք չունենա կամ ոչ կարևոր լինի մյուսի համար:

Գրականություն

1. Արզումանյան Ս., Հոգեբանություն: - Եր., Զանգակ - 97, 2003 - 176 էջ:
2. Ընտանիքի հետազոտման հիմնախնդիրները, Գիտաժողովի նյութեր, Եր., Ակունք 2001 – 116 էջ:
3. Кузнецов Ю.В., Ценностно-адаптивный подход в психотерапии, СПб, 2000.
4. Ананьев Б. Г. Человек как предмет познания. Л-д. 1968.
5. Буева Л. П. Человек, деятельность, общение. 1974 г